ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 152-Ա «20» 05 2022թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2022 թվականի մայիսի «20» -ի N ՀԱ-ի հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) աշխատանքային ծավալը կտրուկ ավելացել է՝ պայմանավորված Բաժնի էլեկտրոնային փաստաթղթաշարժի ծավալի ավելացման, ինչպես նաև արխիվացման ենթակա փաստաթղթերի կուտակման մեծ ծավալով, ինչպես նաև բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների (փաստաթղթերի, նամակների և դիմումների գործավարություն, փաստաթղթաշրջանառություն, Կոմիտեից առաքվող և Կոմիտե մուտքագրվող փաստաթղթերի պատճենահանման և պատկերամուտով մուտքագրման աշխատանքներ ապահովում) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքայինստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գործավարության բնագավառում մեկ տարվա աշխատանքային ստաժ,

2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

5) անգլերեն և ռուսերեն լեզուների ազատ տիրապետում:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. գործավարության կարգի պահանջներին համապատասխան Կոմիտեից առաքվող և մուտքագրվող օտարալեզու փաստաթղթերի հայերեն թարգմանություններիիրականացում.

բ. Կոմիտեի պաշտոնական կայքի ամենօրյա թարմացման աշխատանքներն իրականացնելու նպատակով՝ նյութերի պատրաստում, հավաքագրում և տեղադրում,

գ. պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման համար՝ մասնակցություն այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքներին,

դ. առցանց հայտարարությունների տեղադրման իրականացնում www.azdarar.am << հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,

ե. բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը մինչև վեց ամիսը լրանալը՝ 5 օր առաջ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է վեց ամիսվա համար ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջևդրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. գործավարության կարգի պահանջներին համապատասխան Կոմիտեից առաքվող և մուտքագրվող օտարալեզու փաստաթղթերիհայերեն թարգմանություններն իրականացված են.

բ. Կոմիտեի պաշտոնական կայքի ամենօրյա թարմացման աշխատանքներն իրականացված են,

գ. փորձի փոխանակման, պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով՝ այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքներն իրականացված են,

դ. առցանց հայտարարությունների տեղադրումն իրականացված է www.azdarar.am ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,

ե. բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում: